ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 55-Ն

13 նոյեմբերի 2015 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բյուջեի եկամտային մասի 7332 հովածի (պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տողի <<0>> թիվը փոխարինել <<3000.0>> թվով:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի <<11000.0>> թիվը փոխարինել <<14000.0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<1102.0>> թիվը փոխարինել <<902.0>> թվով, 4251 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<3000.0>> թիվը փոխարինել <<3351.0>> թվով:
3. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4221 (գործուղումներ) հոդվածի <<500.0>> թիվը փոխարինել <<450.0>> թվով, 4232 (համակարգչային ծառայություններ) հոդվածի <<20.0>> թիվը փոխարինել <<0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<800.0>> թիվը փոխարինել <<435.0>> թվով, 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<600.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<150.0>> թվով:
4. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<130.0>> թիվը փոխարինել <<180.0>> թվով, 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<100.0>> թիվը փոխարինել <<0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<200.0>> թիվը փոխարինել <<130.0>> թվով:
5. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածի <<1250.0>> թիվը փոխարինել <<1370.0>> թվով:
6. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 05, խումբ 06, դաս 01 (շրջակա միջավայրի պաշտպանություն) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<900.0>> թիվը փոխարինել <<300.0>> թվով:
7. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածի <<1200.0>> թիվը փոխարինել <<1641.5>> թվով:

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 01, դաս 01 (հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<1350.0>> թիվը փոխարինել <<1685.0>> թվով, 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<150.0>> թիվը փոխարինել <<0>> թվով, 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածի <<430.0>> թիվը փոխարինել <<330.0>> թվով:
9. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<4600.0>> թիվը փոխարինել <<5100.0>> թվով, 4251 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<2000.0>> թիվը փոխարինել <<2600.0>> թվով:
10. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի <<10500.0>> թիվը փոխարինել <<10296.0>> թվով:
11. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<1181.5>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:
12. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4234 (տեղեկատվական ծառայություններ) հոդվածի <<252.0>> թիվը փոխարինել <<135.0>> թվով, 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածի <<350.0>> թիվը փոխարինել <<310.0>> թվով, 4823 (պարտադիր վճարներ) հոդվածի <<100.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
13. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային կենտրոնի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<100.0>> թիվը փոխարինել <<50.0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<85.0>> թիվը փոխարինել <<135.0>> թվով:
14. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5133 (գեոդեզիական, քարտեզագրական ծախսեր) հոդվածի <<100.0>> թիվը փոխարինել <<80.0>> թվով:
15. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 04 (այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:
16. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 09, դաս 01 (տնտեսական հարաբերություններ, այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 8411 (հողի օտարումից մուտքեր) հոդվածի <<-1500.0>> թիվը փոխարինել <<-2630.0>> թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈՒԼՈՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ք. Մարալիկ
13 նոյեմբերի 2015 թվական